ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

Թեմա՝ Հասկանալ դասավանդումը

Կազմեց՝ Լուսինե Բահադուրի Բալայան

(անուն,ազգանուն,հայրանուն)

<<Ա.Մարգարյանի անվան N 7 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Գայանե Ավագյան

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ

(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

ԿԱՊԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ 1. Դասի պլանավորում ----------5

1.1 Ինչպես ճիշտ պլանավորել դասը ----------5

ԳԼՈՒԽ 2 Հետազոտական մաս---------- 7

2.1 Հասկանալ դասավանդումը ----------7

2.2 Դասի արագությունը ----------15

Եզրակացություն----------19

Գրականության ցանկ----------20

Հավելված----------21

Ներածություն

«Նկարիչ լինելով՝ ես կարողանում եմ տեսնել ծաղկի գեղեցկությունը: Բայց դու, լինելով գիտնական, այն մասերի ես բաժանում և դարձնում անհետաքրքիր»:

Ռիչարդ Ֆեյնման

Փոքրիկը հայտնվում է մեր կյանքում որպես նկարիչ: Բոլոր մեծահասակներին թվում է, թե երեխաները ապագայի գիտնականներն են: Աշակերտն իր նկարած երկտողը փոխանցում է մեծահասակին: Նա համոզված է, որ ինքը հիասքանչ է նկարել. Չէ՞ որ իր մտքերի նկարիչն է: Ուսուցման-ուսումնառության ընթացքում աստիճանաբար կորցնում ենք գեղագիտական հարցերում մեր նրբաճաշակությունը: Ու սկսվում է գիտնականների կերտումը: Երեխան ուզում է գրել իր ծաղկի մասին, իսկ մենք այն բացում ենք մինչև խորքերը: Դասավանդողները կարծում են, որ իրենց գործողությունները ճշմարիտ են, քանի որ նրանց նպատակը երեխաներին ուղեկցելն է: Գեղեցկությունը տարրալուծելով ավելի փոքր չափսերում դպրոցում սկսում ենք աշխատել արդեն մշակված օրինաչափություններով: Դրանք ժառանգություն ենք ստացել մանկավարժության ընդհանրական փորձի արդյունքում, որոնց խաչվող և չխաչվող ուղիներում խնդիրը ծաղիկը չկորցնելն է:

«Երբ մտածում ես երեխայի ուղեղի մասին, պատկերացնում ես նուրբ վարդի ծաղիկ, որի վրա ցողի կաթիլը դողում է: Ի՞նչ խնամք ու քնքշություն է պետք, որ ծաղիկ քաղելուց հետո կաթիլ չթափվի»:

Վ.Ա.Սուխոմլինսկի

Այս միտքը մղում է այն համոզմունքին, որ սովորեցնելը արվեստ է: Յուրաքանչյուր դաս մտքի թռիչք է, հայտնագործությունների շղթա:Սակայն այն առաջին հերթին պետք է արթնացնի հետաքրքրություն, կարևոր չէ դասի տիպը՝ գիտելիքների հաղորդման, հարցման, թե ստուգման, ավանդական մեթոդներով, թե այլ ընտրանքային: Խնդիրն այն է, որ այնպես կազմակերպվի դասավանդումը, որ միաժամանակ ձևավորվեն ուսման շարժառիթներ, արտաքին ազդակները կրտսեր դպրոցականի ուղեղին լինեն չափավոր, իսկ խթանիչ ազդակները՝ անվտանգ:

Դասը կատարելագործման և մտավոր զարգացման գործընթաց է, գիտելիքների բարձունքին հասնելու ճանապարհ:Դասի ընթացքում ծնվում են զարմանալի մտքեր, կատարվում են հայտնագործություններ կամ էլ տիրում է ձանձրույթի և անգործության մթնոլորտ: Որքան թանկ և հետաքրքիր կլինեն նստարանին աշակերտի անցկացրած վայրկյաններն ու բոպեները, ժամերն ու տարիները, հիմնականում կախված է ուսուցչից: Շատերիս է հետաքրքրում այն հարցը, թե ինչպես վարել հետաքրքիր և արդյունավետ դաս, այնպիսի դաս, որից երեխաները չցանկանան ուշանալ և զանգից հետո չհեռանան:

Հետազոտության արդիականությունը: Տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը մարտահրավերներ է նետում կրթությանը: Շատ կարևոր է, որ կրթությունը համաքայլ ընթանա ժամանակի փոփոխություններին: արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներում հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Ինչպիսի՞ն պետք է լինի դասի բովանդակությունը, որպեսզի մարդուն նախապատրաստի լիարժեք կյանքին և աշխատանքին: Այսօր ուսուցչի առջև խնդիր է դրված իրականացնել երեխայի, ծնողների, հասարակության և պետության պահանջներից բխող դաս:

Հետազոտության նպատակն է՝ ներկայացնել արդյունավետ դասի վարման մոտեցումներ:

Հետազոտության վարկածն է ՝ենթադրվում է, որ որ ուսուցչի կողմից դասավանդման գործընթացին գիտակցված մոտեցում դրսևորելը կնպաստի դասի արդյունավետության բարձրացմանը:
Հետազոտության խնդիրները ՝
Ուսումնասիրել դասավանդման տարբեր մոտեցումներ
Կիրառել դրանք դասապրոցեսում
Կատարել վերլուծություն

Հետազոտության մեթոդներն են ՝ սկզբնաղբյուրի ուսումնասիրություն, վերլուծություն, փորձարկում, դիտարկում:
Հետազոտության կառուցվածքն ու ծավալը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, եզրակացությունից , օգտագործած գրականության ցանկից ։ Ծավալը 22 մեքենագիր էջ է։

Հետազոտությունը երկար տարիների կուտակված փորձի վերլուծությունն է: Կարևորվում են ուսուցչի կողմից դասավանդումը հասկանալու մոտեցումները: Հետազոտությունը ներկայացված տեսակետների դիտարկումն է սեփական գործունեության վերլուծության, փորձի ներկայացման ճանապարհով:

Գլուխ 1: Դասի պլանավորում

Ի Ինչպես ճիշտ պլանավորել դասը

Ուսուցչի մասնագիտական ամենակարևոր որակներից մեկը դասը ճիշտ պլանավորելն է: Հստակ գիտակցելով դասի նպատակներն ու խնդիրները և ճիշտ պլանավորելով դասը՝ ուսուցիչը կարող է մեծապես նպաստել ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Դասի պլանավորումը կարողություն է, ինչի ձեռքբերման ուղղությամբ անհրաժեշտ է հետևողականորեն աշխատել: Դասը պլանավորելուց առաջ պարզում ենք՝սովորողների նախնական գիտելիքները, օգնում ենք գնահատել այն, ինչ գիտեն և արդեն ունեցած գիտելիքների հիմքի վրա նոր գիտելիքներ կառուցել, ինչպես նաև բացահայտել չիմացածը, սովորողների կարողությունները՝ ինչ պետք է կարողանան անել ձեռք բերած գիտելիքների շնորհիվ,ինչպե՞ս են սովորողները ցուցադրելու այն, ինչ գիտեն, գնահատման ինչ չափանիշներ են կիրառվելու,նոր նյութը ներկայացնելու եղանակների և միջոցների լավագույն ընտրությունը, սովորողների համար տեղեկատվությունը ընկալելու դյուրին եղանակների մշակումը, ինչպես հնարավորությաւն տալ սովորողներին՝ իրական կյանքի հետ կապեր ստեղծելու և կիրառելու մտածողության բազմազան և բարդ հմտություններ, որոնք անհրաժեշտ են դասի ընթացքում և դրանից դուրս հաջողության հասնելու համար, ինչ է անհրաժեշտ անել ուսումնական միջավայրում հարմարվելու և ուսուցման արդյունավետության հասնելու համար:

Դասի սկիզբը

Գրավել աշակերտների ուշադրությունը, ապահովել հետաքրքրությունը և մասնակցությունը:

Դասը սկսում ենք թեմայի վերաբերյալ անսովոր փաստերով, զարմանալի հետաքրքրական տվյալներով, ուշագրավ նկարներով, պատկերներով,, հարցաթերթիկներով, խնրահարույց հարցերով:

Կապել ուռսումնական նյութը աշակերտների ունեցած փորձի հետ:

Բերում ենք օրինակներ անցածից՝ հնարավորինս կապելով դրանք օրվա դասանյութի հետ, հաշվի ենք առնում տվյալ նյութից սովորողների արդեն ունեցած գիտելիքներն ու հմտությունները, առաջարկում ենք հիշել ցանկացած դեպք իրենց կյանքից, որոնք առնչվում են նոր նյութի հետ:

Դասի վերջնարդյունքը:

Դասի հենց սկզբից սովորողների համար ակնառու ենք դարձնում, թե ինչ են անելու դասի ընթացքում, ինչ նոր բան են իմանալու կամ կարողանալու անել դասի ընթացքում: Երբեմն դասի վերջնարդյունքը գրատախտակին գրելը և ողջ դասի ընթացքում սովորողներին տեսանելի դարձնելը ավելի նպատակահարմար է:

Դասի կառուցվածքը:

Կարևոր է, որպեսզի աշակերտներն իմանան, թե ինչ են անելու դասի ընթացքում, ինչ ճանապարհով են գնալու:

Շահագրգռվածության բարձրացում:

Երբ սովորողները բավարար դրդապատճառ չեն ունենում և չեն կարողանում ստացած տեղեկությունը կապել կյանքի հետ և չեն տեսնում դրա օգտակարությունը, չեն ցանկանում սովորել: Հիանալի սկիզբը հաջողության գրավականն է:Սկսում ենք դասը ակտվացնող, նույնիսկ անակնկալ պարունակող վարժանքով, առաջադրանքով՝ հստակ պատկերացնելով համապատասխանությունը դասանյութի բովանդակությանը և նպատակներին:

Դասի հիմնական մասը

Դասի այս մասում իրականացնում ենք նյութի հիմնական ուսուցումը՝ հասցնելով նյութի բովանդակությունը սովորողներին և կիրառելով այնպիսի մեթոդներ, որոնք ապահովում են սովորողների գործուն մասնակցությունը գիտելիքների ձեռքբերման գործընթացում: Դասը արդյունավետ վարելու համար պատրաստում ենք ամեն ինչ, պլանավորում ենք սովորողների գործունեությունը, ժամանակը, հարցադրումները, վերջնարդյունքները, գնահատման և ստուգման չափանիշները:

Եզրահանգում

Ամփոփում ենք դասի վերջնարդյունքը, ստեղծում հետադարձ կապ՝ պլանավորելով ապագայի դասերը: Կապում ենք յուրաքանչյուր օրվա սովորածը հաջորդ դասի թեմայի հետ: Եթե կարողանանք սովորողների առջև բացել ապագայի հետ կապված հնարավորությունները, ապա կօգնենք նրանց հանգելու այն մտքին, որ այսօրվա սովորածը վաղվա հաջողության գրավականն է:

Գլուխ 2: Հետազոտական մաս

2.1 Հասկանալ դասավանդումը

Դասն ամբողջական համակարգ է, մանկավարժական գործընթացի բջիջը: Այն սովորողների կրթության, զարգացման և դաստիարակության խնդիրների լուծման համար պարբերաբար կիրառվող գործընթաց է, որոշակի ժամանակահատվածում ուսուցիչների և սովորողների համատեղ գործունեության կազմակերպման ձև: Դասը միևնույն տարիքային խմբի երեխաների կրթության կազմակերպման ձև է՝ կոնկրետ օրակարգով և բոլորի համար միասնական կրթական ծրագրով: Այդ ձևում ներդրված են կրթական-դաստիարակչական գործընթացի բոլոր բաղադրիչները՝ նպատակ, բովանդակություն, միջոցներ, մեթոդներ, կազմակերպման և ղեկավարման գործունեություն և դրանից բխող դիդակտիկ տարրեր: Յուրաքանչյուր դաս սկսվում է վերջնական նպատակի գիտակցումով և դրա ճշգրիտ, կոնկրետ սահմանումով, այնուհետև նպատակին հասնելու միջոցների հաստատ մամբ և վերջապես նպատակին հասնելու մեթոդների սահմանմամբ: Բազմաթիվ տեսություններ և դրանց կիրառման փորձի վերլուծությունն ապացուցում են, որ ամենաարդյունավետ ուսուցումը կատարվում է այն իրավիճակներում, երբ սովորողները պետք է որոշակի գործողություններ կատարեն իրենց նպատակներին հասնելու համար՝ սովորածի հիման վրա նորը ստեղծելով:

Հետազոտական աշխատանքի հիմնական առանցքը դասավանդումը հասկանալն է: Առանձնացրել եմ մի քանի առանցքային ուղղություններ, որոնք կարևոր են արդյունավետ դասավանդում իրականացնելու համար, այնպիսի դասավանդում, որի հիմքում կառուցողական մոտեցումներն են և բոլոր աշակերտների առանձնահատկություններին համապատասխան դասավանդումը:

Լավ դասավանդումը ավելին է, քան թե հմտությունը, սակայն չկա լավ դասավանդում առանց հմտության:

Փորձում ենք լինել գիտակցված և կանխամտածված դասավանդման մեջ, վճռական ենք սաներին հաջողության հասցնելու գործում, հստակ գիտենք, թե ինչ պետք է սովորեցնել, թե ինչ է նշանակում ձեռքբերում, ինչ է լավ մշակված պլանը:

Աշակերտները շահում են, երբ ուսուցիչները հակված են սովորելու ողջ կյանքի ընթացքում: Սեփական գործունեության գնահատումը, երբ շարունակաբար կշռադատում, վերլուծում, հայտորոշում ես աշխատանքիդ արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում ենթարկում փոփոխության, կանգնած ես արդյունավետ դասավանդման ճանապարհի վրա: Մասնագիտության նկատմամբ հարգանքը սկսվում է մեզնից, այն արժանապատվության դրսևորում է:

Հաջողակ ուսուցիչները ողջունում են փոփոխությունը իրենց դասարանում: Նրանք միշտ հետևում են նոր գաղափարներին և լավագույն փորձառությանը:

Փշրելով կարծրատիպերը՝ ստեղծագործում ենք, խուսափելով պատրաստի կաղապարներից: Դասի հանդեպ հետաքրքրության մարումը ձանձրալի և միապաղաղ աշխատառճի շղթայի կրկնությունն է:



3.Ինչպես սովորեցնել՝ հաջողակ ուսուցիչները գիտեն ինչպես ռիսկի դիմել:

Ուսումնառությունը իմաստալից, նպատակային դարձնելու համար էական է դասավանդման բազմազան ձևերի ու ռազմավարությունների կիրառումը՝ բացահայտել, թե երբ և որ իրադրության մեջ դրանցից որն է անհրաժեշտ կիրառել աշակերտների ուսումնառության արդյունավետությանը նպաստելու համար:

4.Ուսումնական միջավայր՝ կարողանալ զգալ սաներին և համապատասխան ուղերձներ հղել:

Ինչպես ստեղծել ուսումնառությանը նպաստող միջավայր:

Դասարանը փոքր համայնք է , որտեղ բոլորը աշխատում են համատեղ, ունեն ընդհանուր նպատակ և աջակցող ղեկավար՝ ուսուցիչ:

Ի՞նչ է ենթադրում արդյունավետ դասարանավարությունը՝

Ուսումնառությանը նպաստող մթնոլորտ

Որոշումների կայացում

Ուսումնական ծրագիր

Կարգապահություն, հակասությունների լուծում

Հանգիստ, ապահով հրապուրիչ, հեշտ վերահսկելի

Մտերմիկ հարաբերություններ, ինքնարտահայտման հնարավորություններ

Բազմատեսակ, մեծաքանակ, հասանելի, համապատասխան ուսումնական նյութեր

Անընդհատ փոփոխվող, մասնակցային հնարավորություններ

Տեղեկատվության , աշակերտների աշխատանքների տեսանելիություն

Ողջունելի է անընդհատ փոփոխվող միջավայրում գաղափարների յուրացումը: Այդ միջավայրում տեսանելի են սաներին զգալու և համապատասխան ուղերձներ հղելու «նետերը»: Ինչպե՞ս համապատասխանեցնել միջավայրը՝ ստեղծել աշակերտների համար առավելագույն հնարավորություններ շարժվելու, ընտրություն կատարելու, ինքնուրույն, համատեղ աշխատելու համար: Կարևոր է հոգատարությունը, հարմարավետությունը, դասարան ուրախություն բերելը, կարգապահությունը, տարածքի ճիշտ կազմակերպումը: Երբ

ապահովում ենք աշակերտների ստեղծածի տեսանելիությունը, դրսևորում ենք հոգատարություն:

5. ***Հստակ խնդիրներ՝ուսուցիչները կրկնում են դասի խնդիրները և ակնկալում,որ սաները մասնակցեն անհրաժեշտության դեպքում իրենք նույնպես սահմանեն ուսումնական խնդիրներ:***

Ի՞նչ պետք է իմանան սովորողները և ի՞նչ կարողանան անել: Այս հարցերի պատասխաններն են ընկած ուսուցում կառուցելու հիմքում,ինչն էլ նպաստում է սովորողների անհատական զարգացմանը, դրական շարժառիթների առաջացմանը, գիտելիքների ձեռքբերմանը և գնահատման ճիշտ կազմակերպմանը: Ուսուցանել կարելի է ասելով և մեկնաբանելով, ցույց տալով և ցուցադրելով, սովորողի ջանքերն ուղղորդելով և ուղղություն տալով կամ էլ այս բոլոր գործողություններն համադրելով: Սա էլ հենց թելադրում է, թե ուսումնառությունը խրախուսելու համար ինչպես դասավանդել կամ ինչ ռազմավարություններ կիրառել:

Խնդիր = նպատակ + պայման

Հաշվի առնելով ուսուցման կոնկրետ պայմանները՝ ձևակերպում ենք կոնկրետ ուսումնական խնդիրներ: Միայն այն դեպքում ,երբ աշակերտը հասկանում է խնդիրը և այն ընդունում է որպես սեփական խնդիր, նրա գործողությունները դառնում են նպատակաուղղված: Որպեսզի աշակերտն ընդունի իր առջև դրված խնդիրների կարևորությունը, նրան պետք է դնել այնպիսի իրավիճակի մեջ, որ նա իրականացնի դրանք: Աշակերտը պետք է նաև հասկանա, թե կոնկրետ ինչ գիտելիք է իրեն հարկավոր և ինչպես է կիրառելու այդ գիտելիքը: Իհարկե այս ամենը կաշխատի արդյունավետ միայն այն դեպքում, երբ ուսուցիչը հստակ պլանավորի իր յուրաքանչյուր քայլը և ըստ այդ պլանի քայլ առ քայլ իրականացնի իր աշխատանքը: Դասի գլխավոր պահանջը դասի ընթացքում ուսուցանվող նյութի յուրացումն է: Աշակերտի և ուսուցչի գործողությունների համատեղումը խոսում է ուսուցչի վարպետության մասին:

6. Պլանավորում՝ պլանավորման տապալումը դասավանդման տապալումն է:



Արդյունավետ ուսուցման կարևորագույն պահանջներից մեկը ներառարկայական և միջառարկայական ծրագրերի իմացությունն է, իսկ ինտեգրման մոտեցումներով պլանավորումները կարողունակությունների մշակման արդյունավետությանն են նպաստում: Գիտելիքները միավորված, ընդհանրացված են, որոնք հասկացությունների, գործնական առաջադրանքների միջոցով անցնում են առարկայից առարկա: «Մաթեմատիկա», «Տեխնոլոգիա», «Ես և շրջակա աշխարհը» առարկաների շրջանակներում միջառարկայական դասավանդում՝ թեմա՝ <<Օրացույց>>: Ներառվել են նաև ֆինանսական կրթության բաղադրիչը և ձեռնարկատիրական կրթության տարրերը:

Աշակերտները կարողացան ինքնուրույն և համատեղ ջանքերով լուծել հիմնախնդիրը՝ պատրաստել օրացույց, կիրառեցին տարբեր առարկաներից իրենց գիտելիքները, ստացան իրական և շոշափելի արդյունքներ:

7.Հասկանալ աշակերտներին. կարևորել հաղորդակցումը՝ տալով սաներին զգայական աջակցություն:

Աշխատում ենք այն համոզմունքով, որ բոլոր աշակերտները կարող են սովորել: Աշխատանքի հիմքում աշակերտների հետաքրքրությունների, պահանջմունքների, կարողությունների, նախասիրությունների բացահայտումն է:

Երեխաներին դիմել անուններով

Արձագանքել նրանց մտքերին, գաղափարներին

Լրջորեն ընդունել երեխաների հարցերը

Խուսափել երեխային շփոթության մատնելուց

Երեխաները պետք է զգան, որ իրենց հետ հույսեր են կապում

Երեխաների ներգրավել դասարանական կանոններ, գնահատման չափանիշներ ստեղծելու գործում

Օգնել աշակերտներին բացահայտելու իրենց ուժեղ կողմերը

Օգնել աշակերտին հասկանալ, որ անհաջողությունը ուսումնական գործընթացի անխուսափելի բաղադրիչ է

Խրախուսանք, խանդավառություն, գովասանք, հումոր, հաղթանակ…

Դասարանում ցանկացած երեխա ազատ է որևէ նոր բան փորձելու, քաջալերվում է նրանց առաջընթացը: Խրախուսվում է մտքերի փոխանակությունը, համարձակությունը:

Աշակերտները զարգանում են որոշակի սոցիալական միջավայրում: Ուսուցչից է կախված, թե երեխային իր ներուժը զարգացնելու համար ինչպիսի հնարավորություններ կտրվեն: Հաջողության հասնելու երեխաների մոտ պետք է ձևավորել՝ սեփական մտածողության ընթացքի մասին մտածելու, դատողություններ անելու կարողություն, գործողությունները,քայլերը պլանավորելու կարողություն:

Հաջողություններ արձանագրելու նախապայմաններից է աշակերտների սովորելու ոճերի հաշվառմամբ ուսումնական գործընթացի կազմակերպումը: Դասավանդման մեթոդիկան պետք է արտացոլի ուսուցման էական գծերը, հենվի մտածողության 5 չափանիշների վրա՝

1.Գիտելիքների ձեռքբերում և միավորում

2.Գիտելիքների ընկալում և բարելավում

3.Գիտելիքների իմաստավորված կիրառում,

4.Դիրքորոշում և ընկալում

5.Մտավոր կարողություն

6. Այս համատեքստում կարևոր է նաև ուսուցման շարժառիթների ստեղծումը և ուսուցման ինքնավարությունը: Շարժառիթը դասարանում և դասարանից դուրս երեխայի գործունեության խթանն է: Խրախուսանքը ամրապնդում է վարքագիծը; Կարևոր է նաև խրախուսման ձևերի ընտրությունը՝ մրցանակ, գնահատական, վկայական: Մարդկային վարքագծին բնորոշ է պարգևատրված լինելու ցանկությունը:Ուսման կառուցողական մեթոդի դեպքում ուսուցչի կողմից գնահատումը, ինչպես նաև աշակերտների ինքնագնահատումը կատարվում են՝ հաստատելով դրական հատկանիշները և շեշտը դնելով ձեռքբերումների վրա: Տարբերակված, իրագործելի առաջադրանքը, որի ժամանակ հաշվի են առնվում աշակերտի անհատական հմտություններն ու ունակությունները, աշակերտին հնարավորություն է տալիս սովորել՝ առանց ուսման մեջ անհաջողության մատնվելու: Միաժամանակ, չի կարելի հաշվի չառնել կոնկրետ աշակերտի իրական կարողությունները, այն է՝ որքանո՞վ է նա օգտագործել իր ունակություններն առաջադրանքը կատարելու համար: Սխալները քննարկվում և ուղղվում են համատեղ: Սխալ կատարելը համարվում է ուսման գործընթացի բաղկացուցիչ մասը: Այն աշակերտներին տալիս է որոշակի ապահովության զգացում և թեթևացնում է լարվածությունը:

Գնահատման գործընթացի ժամանակ ուսուցիչը պետք է՝

- ոչ թե պարզապես գնահատի, այլև ամրագրի զարգացման փուլը,
- գնահատի աշակերտի առաջադիմությունը՝ իր նախորդ ձեռքբերումների համեմատ,
- մատնանշի, թե որքանով է աշակերտն օգտագործել իր ընդունակությունները:

Գնահատման հայեցակետերը համապարփակ են և կենտրոնանում են ավելի շատ աշակերտի անհատականության զարգացման, քան առարկայի վրա:

Ինչպես սովորեցնել՝ ինչպես ռիսկի դիմել, ճիշտ ընտրել մեթոդներն ու հնարները:



Ուսումնառությունը իմաստալից, նպատակային դարձնելու համար դասավանդման

բազմազան ձևերի ու ռազմավարությունների կիրառում: Բացահայտել, թե երբ և որ իրադրության մեջ դրանցից որն է անհրաժեշտ կիրառել աշակերտների ուսումնառության արդյունավետությանը նպաստելու համար: Ինչպե՞ս սովորողի ուշադրությունը ավելի շատ կենտրոնացնել սովորելու, գիտելիքներ ձեռքբերելու վրա, քան գնահատականի: Կազմել բազմակի ընտրությամբ առաջադրանքներ, որոնք ձևավորում են առաջադրանքի պայմանները, առաջադրանքներ, որոնց պատասխանը կձևավորի սովորողը, ընդարձակ պատասխան ակնկալող առաջադրանքներ, կիրառել գնահատման խրախուսման մեխանիզմներ: Այս տարբեր մեթոդները կարող են հաջողությամբ կիրառվել միայն այն ուսուցիչների կողմից, ովքեր ծանոթ են տվյալ հասկացություններին, դրանց կիրառման կանոններին, առավելություններին և հնարավոր դժվարություններին, և ովքեր պատրաստ են լուծելու այն խնդիրները, որոնք կարող են ծագել ուսուցման գործընթացում :

Դակվող քարտեր

Այս շարժառիթային գաղափարը կարելի օգտագործել տարբեր նպատակներով՝ վայելչագրության, ընթերցանության, մաթեմատիկական առաջադրանքների կատարման, ստեղծագործական առաջադրանքների կատարման;

Երեխաները ստանում են քարտեր: Առաջադրանքը հստակ կատարելուց հետո քարտը դակվում է: Երբ քարտն ամբողջությամբ դակվում է, ստանում են կտրոն, որն էլ հնարավորություն կտա ըստ ցանկության ընտրել մեկ այլ առաջադրանք:

Մենք կարողացանք վաստակել

Խմբերի սեղաններին ամրացված են <<Մենք կարողացանք վաստակել>> ցուցանակը:Շաբաթվա ընթացքում դրական վարքի համար խմբերի ցուցանակին որևէ պատկերով կնիք է դրոշմվում: Շաբաթվա վերջում ի մի է բերվում վաստակած միավորների քանակը: Դրական վարքագիծ դրսևորած խումբը արժանանում է որևէ արտոնության:

Արդյունավետ դասավանդում իրականացնելու համար

Օգտագործում ենք սովորողների արձագանքը՝ դասավանդումը և դասարանական մթնոլորտը բարեփոխելու համար:

Կատարում ենք սեփական դասավանդման արդյունավետության վերլուծություն:

Նպաստում ենք ուսումնառության նկատմամբ սիրո և գնահատանքի ձևավորմանը:

Օգնում ենք աշակերտներին ձեռք բերելու անհատական բարձր չափանիշներ:

Պարբերաբար գնահատում ենք աշակերտների առաջընթացը և արձագանքում նրանց փոփոխվող պահանջմունքներին:

Դասարանում ստեղծում ենք վստահության, խրախուսման, հոգատարության, ակտիվ սովորելու, ընտրության, համարձակ գործունեության մթնոլորտ:

Պարբերաբար անդրադառնում ենք այն հարցին, թե աշակերտներն ինչ գիտելիքների կարիք ունեն և ինչպես են սովորում:

2.2 Դասի արագությունը

➢ Արագության մշակույթի հիմքում ընկած է հրատապության զգացումը՝ մտածել ջանասիրաբար, բայց ոչ թե խելահեղ: Երբեմն պետք է դանդաղեցնել տեմպերը դասարանում ուսումնառության առաջընթացը ապահովելու համար:

Ուսուցչի մասնագիտական վարպետության մասին է խոսում դասի ընթացքում ժամանակի ճիշտ պլանավորումը: Նկատվում է արագության իրականացման երկու թերություն՝ ուսուցիչը արագ ավարտում է պլանավորածը և չգիտի ինչ անել դասի մնացած րոպեներին, ուսուցիչը խելահեղ արագությամբ վարում է դասը և չի հասցնում ավարտել պլանավորածը: Այս ամենը վկայում է այն մասին, որ ուսուցիչը չունի պլանավորման հմտություններ, ճիշտ չի պատկերացնում դասի կառուցվածքային փուլերի առանձնահատկությունները: Անհրաժեշտ է պահպանել՝

- պլանավորված գործողությունների ճիշտ հաջորդականությունը,
- չկորցնել ավելորդ րոպեներ անհարկի դիտողությունների կամ դասին աշակերտների տարիքային առանձնահատկությունների անհամապատասխան տեղեկություններ տրամադրելու վրա,
- աշակերտներին տալ ժամանակ հարցերին պատասխանելու համար,
- պլանավորել հարցադրումների համակարգը:

Արագության ապահովման համար կարևոր է առաջադրանիք հետաքրքիր լինելը. ինչքան բարձր է հետաքրքրության աստիաճանը, այդքան ավելի արագ է աշակերտը կատարում առաջադրանքը: Անկազմակերպ դասից խուսափելու ձևերից մեկը սաներին բացատրելն է , թե ինչ են նրանք սովորելու և անելու դասի ժամանակ: Կենտրոնացած պահելով սաների ուշադրությունը ուսումնական մեկ հանձնարարությունից մյուսին անցնելիս՝ հայտարարել, թե որքանով են նրանք մոտ օրվա նպատակի իրականացման ավարտին: Կարևոր է աշակերտների կողմնորոշումը դասի թեմայի մեջ, մոտիվացիայի ստեղծումը, թեմայի վերաբերյալ գիտելիքների ու պատկերացումների ակտիվացումը: Դասարանում առկա ղեկավարման վահանակին ներկայացվում է դասի նպատակը կարելի է համատեղ որոշել նախատեսվող գործողությունների նպատակը: Այնուհետև այն քննարկվում է, ընդ որում այդ ընթացքում կարող է պարզ դառնալ, որ այն միակը չէ: Կարևոր է , որ երեխան հասկանա, որ ինքն է որոշում իր գործունեության նպատակը՝ չնայած ուսուցիչը խորամանկորեն ուղղորդում է աշակերտին դեպի պլանավորված նպատակը:

Կարևոր հարցեր են՝

- Ո՞րն է այս դասի նախատեսված նպատակը:
- Հիշեք՝ յուրաքանչյուր դասի համար կա մեկ էական հարց, և սաները պետք է կարողանան պատասխանել այս հարցին մինչև դասի ավարտը:
- Համապատասխան բառապաշարը պետք է կիրառվի դասին: Բառապաշարը սահմանափակել այնքանով, որքանով որ սաները ունակ են ընկալել: Համոզվել, որ այդ բառապաշարը ակտիվորեն օգտագործվում է համատեքստում՝ դասի ողջ ընթացքում: Դասի ընթացքում սաներին կիրառել տալ այդ բառապաշարը:

Հստակ անցումներ

Դասի ընթացքում մեկ թեմայից մյուսին հստակ անցումները ապահովելու համար կարևոր են նպատակային արագությունը և հստակ սահմանված ընթացքը:Մտածել երկու քայլ առաջ հաջորդ հանձնարարության վերաբերյալ և արդեն իսկ պատրաստվել հաջորդ հանձնարարությանը դեռևս չավարտած նախորդը: Քանի դեռ սաները ավարտում են ուսումնառության մեկ հատվածը, փոխանցել հաջորդ նյութը, որպեսզի խնավի ժամանակի անցումը մեկ հանձնարարությունից մյուսին:

Համոզվել, որ դասանյութերը պատրաստ են

Ունենալ ձեռքի տակի նյութեր, մարկերներ, մկրատներ և թղթեր կիրառության համար: Ստեղծել կենցաղային իրերի արկղեր, որտեղ կան սոսինձներ, կպչուն թղթեր: Տեղադրել այդ արկղը աշխատանքային ընդհանուր սեղանի վրա: Յուրաքանչյուր խումբ կարող է ընտրել մատակարարման կապիտանի, ով հետևում է արղկին և հավաքում այն դասի ավարտին: Կարևոր է ուսումնական միջավայրի ճիշտ կազմակերպումը, ինչը ազդում է երեխայի կրթական փորձի վրա: Պետք է նախատեսել տարածքներ, որոնք ապահով շարժվելու հնարավորություններ կտան: Տարածքը և նյութերը փոփոխել՝ յուրաքանչյուր երեխայի կարիքները հոգալու համար: Կազմակերպել աշխատանքային կենտրոններ՝ խրախուսելով աշակերտների ազատ ընտրությունը և ուսումնառության ակտիվությունը: Անահատական տեղեր հատկացնել՝ անձնական իրերը պահելու համար: Կիրառել զարգացման մակարդակին համապատասխան նյութեր: Ուսուցողական այնպիսի նյութեր տրամադրել, որոնք խթանում են երեխաներին ինքնուրույն տեղեկություններ հայթայթել:

Ներկայացրնել հրահանգները

Սա օգնում է պահպանել դասի արագությունը առանց ընդհատումների: Հրահանգների յուրաքանչյուր բաժին գրել գրատախտակին նախօրոք կամ ներկայացրնել սահիկաշարի մեջ:Եթե ուսուցիչը հույսը դրել է միայն բանավոր հրահանգներ տալու վրա, ապա մտածենք այն սաների մասին, ովքեր լսելու, որշադրության կենտրոնացման ունակությունից թույլ են:

Ստուգել ընկալումը

Դասի ժամանակ դադար տալը՝ ստուգելու, թե աշակերտները որքանով են ընկալել դասը և ապա վերափոխել այն ըստ աշակերտների կարիքների համապատասխան. այս առումով ֆորմատիվ գնահատումը շատ կարևոր է ուսումնառության արագության համար: Ուղիղ հրահանգներից հետո զույգերով աշխատելը և կիսվելը ստեղծում է լավ էներգիա: Կարճ խոսել, ամեն 5-7 րոպեն ընդհատելով բացատրությունը և տալով նոր տեղեկություն՝ հետևյալ հրահանգով՝ “շրջվիր և զրուցիր մոտ նստած դասընկերոջդ հետ”: Պտտվել դասարանում և լսել սաներին ՝ գնահատելու նրանց ընկալումը: Սաները միմյանց հետ կարող են ամենաքիչը խոսել 45 վայրկյան: Նաև օգտագործել ոչ բանավոր ժեստեր՝ ստուգելու, թե ինչպես են սաները աշխատում և թե արդյոք սաներին պետք է ավել ժամանակ, թե վերադասավանդում է անհրաժեշտ:

Ընտրել դասավանդման ամենաարդյունավետ ձևը

Ինչպե՞ս մատուցել նոր տեղեկույթը սաներին. ուսուցիչներին այս հարցը պետք է հուզի յուրաքանչյուր դաս պլանավորելիս: Երբեմն նոր տեղեկությունը այնքան "նոր է, որ սաները պետք է սկզբում տեսնեն վիզուալ պատկերը, ապա ստանան հրահանգ ուսուցչից մտածել այդ տեղեկության մասին: Երբեմն, ցանկալի է ստեղծել մի իրավիճակ, որը կապ ունի սանին ներկայացվող թեմայի հետ և ապա կազմակերպել խմբային աշխատանքը: Հրահանգի տեսակը որոշելը (ուղիղ,աշակերտակենտրոն, միջնորդավորված) կարող է լինել այնքան կարևոր, որքան որ բովանդակության ընտրությունը:

Գրաֆիկական կազմակերպիչներ

Գրաֆիկական կազմակերպչի օգտագործումը սաներին հնարավորություն է տալիս տեսողականորեն դասակարգել նոր տեղեկատվությունը կամ վերանայել հինը: Սաները պետք է կարողանան գաղափարապես պատկերացնել այն տեղեկատվությունը, որը մենք տալիս ենք նրանց: Այս կազմակերպիչները հեշտացնում են դա: Երբ նրանք նայում են կազմակերպված տեղեկատվությանը, նրանց համար ավելի հեշտ է պահպանել և հիշել այդ տեղեկատվությունը: Տանը ավելի հեշտ է այդ գրաֆիկային նայել և սովորել, քան թե տետրի ազատ շարադրված տեղեկությանը: Օրինակներ. Թող սաները տեղեկատվությունը գրանցեն գունագեղ գծապատկերներով իրենց տետրերի մեջ, օգտագործեն համակարգիչների գրաֆիկական կազմակերպիչներ կամ ստեղծեն պանակներ:

Ձևավորող գնահատումը և արագությունը

Ստուգել ընկալումը՝ կիրառելով նաև այլ քայլեր: Ձևավորող գնահատումը պետք է օգտագործվի քո դասավանդման ընթացքին և արագությանը համապատասխան: Իմանալով, թե որտեղ են սաները՝ դու կհասկանաս շարունակել նույն թեման, թե առաջ անցնել:

Մանրազննին մշակված դասապլան

Դասը պետք է լինի հստակ մշակված: Հանձնարարությունները պետք է լինեն մարտահրավերային և անցկացվեն արագ տեմպերով: Սաները ձանձրանալու հնարավորություն և չպետք է ունենան: Ամբողջ դասը պետք է լինի ակտիվ դաս: Սաներին պետք է հասցնել գիտելիքների բարձրագույն մակարդակին:

Աշակերտակենտրոն մոտեցում

Ամբողջ դասը պետք է լինի աշակերտակենտրոն:Այն ձևերը, որոնցով մենք սովորեցնում ենք մեր սաներին, պետք է ցույց տան, որ նրանք մեր ուշադրության կենտրոնում են և որ մեր արածը կենտրոնացած է նրանց հաջողության վրա:Տեխնոլոգիայի կիրառումը դրա կարևոր բաղադրիչն է: Այն սաներին տալիս է 21-րդ դարի հմտություններ, որոնք և՛գրավիչ են, և՛առնչվում են իրական կյանքին:Դասը համագործացություն է: Եթե արդյունավետ և

հաջողությամբ պլանավորենք դասը, սաները արդյունավետ և հաջող կաշխատեն և կսովորեն:Գնալ մի քայլ առաջ ուսումնական գործընթացում. դառնալ ուղղորդող, և ոչ թե դասարանում «բոլոր գիտելիքները տվող»:

Ի՞նչ կասեք դասի ավարտի մասին

Դասը շատ կենսական է սանի ընկալման համար: Երբ դասն ավարտում եք, աշակերտների հետ ուսումնառության խնդիրներին անդրադառնալը կարևոր է՝ հասկանալու աշակերտների սովորածը: Ուսումնառության պատճառները պետք է վերանայվեն՝ անդրադարձ կատարելով նաև ապագայում այդ հմտությունների կիրառման հարցին: Դասի ավարտը հնարավորություն է տալիս աշակերտներին հասկանալ,թե ինչի նա հասավ-իրականացրեց և տալիս է դպրոցական օրվան կազմակերպվածություն:

Ամփոփում

Ամփոփել դասը ավարտին հասցնելու համար: Դա այն ժամանակն է, երբ կարող ենք գնահատել աշակերտների ունակությունները՝ արդյունավետորեն պատասխանելով կարևոր հարցին, և կարող եք պարզել, թե արդյոք անհրաժեշտ է ընդլայնել կամ կատարելագործել հմտությունը: Պետք է ստեղծագործական ուղիներ գտնել, որպեսզի աշակերտները դասի վերջում պատասխանեն էական հարցին: Աշակերտների `այս պահին էական հարցին պատասխանելու ունակությունը ուսուցչի համար նրանց ուսումը գնահատելու միջոց է: Սա այն պահն է, երբ ուսուցիչը կարող է որոշել՝ արդյոք պետք է վերադասավանեդել, թե՞ անհրաժեշտ է արագացնել ուսումնառությունը: Դասի փակումը շրջապտույտ է դեպի հետ՝ դասավանդման խնդիրները: Դա կարող է լինել հարցերի, ելքի տոմսերի, արագ ամփոփման հարցերի միջոցով:

Եզրակացություն

Հետաքրքիր դասեր վարելու համար պետք է պլանավորել դասը աշակերտների տարիքային և հուզականային առանձնահատկություններին համապատասխան: Հաջողության գրավա կանը ստեղծագործական սկիզբն է: Բացի գիտելիք ձեռք բերելուց, աշակերտները հնարավորություն ունեն ցուցաբերելու անկախ մտածելակերպ, համբերություն, հանդուրժողականություն, պատասխանատու և սատարող մոտեցում: Ավելին, նրանք զարգացնում են հաղորդակցվելու ունակությունները, համագործակցային աշխատանքի և կազմակերպչական հմտությունները, ինչպես նաև որդեգրում են օժանդակություն ցուցաբերելու և ստեղծագործ մոտեցումներ: Հետևաբար, ուսուցչի պարտականությունները ներառում են ուսումնական նյութի մանրակրկիտ պատրաստումն ու դասի կառավարումը, ինչպես նաև թեմայի ու դասավանդման ամենահարմար մեթոդի ընտրությունը:

Հետաքրքիր դասը տրոհված է տրամաբանորեն շաղկապված և միմյանց լրացնող փուլերի. անցումը պետք է լինի սահուն, անհարկի քայլերից զերծ: Հրապուրիչ դասի ժամանակ պետք է կիրառել տեխնիկական տարբեր հնարներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ուսումնաօժանդակ նյութեր: Դրսևորել ճկունություն. տեխնիկայի խափանումը, աշակերտների հոգնածությունը , չսպասված հարցադրումները՝ իրավիճակներ են, որոնցից դուրս գալու համար պետք է գտնել արագ և գրագետ լուծումներ: Լարվածությունը թուլացնելու համար անհրաժեշտ է ունենալ թեմային համապատասխան լրացուցիչ, հետաքրքիր առաջադրանքներ, հիմնականում խաղային իրավիճակներով:

Աշակերտների փոխարեն չկատարել առաջադրանքները, օգնեք նրանց, ուղորդեք՝ առանց վախենալու աշխատանքային աղմուկից: Միշտ չէ, որ լռությունը լիարժեք ընկալում է ապահովում: Խթանել ակտիվությունը՝ տալով աշակերտներին պարզ և տրամաբանված հրահանգներ ցանկացած բարդության առաջադրանքներ կատարելիս: Յուրաքանչյուր առաջադրանքից վերհանել առավել շատ արդյունավետություն աշակերտների ընկալման մասով:

Պետք չէ վախենալ փշրել կարծրատիպերը, ստեղծագործել, չօգտագործել պատրաստի կաղապարներ. Դասի հանդեպ հետաքրքրության մարումը նմանատիպ աշխատանքների կրկնությունն է: Ձանձրալի և միապաղաղ աշխատառճի շղթան պետք է քանդել: Դասի ընթացքում աշակերտներին զբաղված պահելու համար նախատեսված առաջադրանքներ մշակել: Ստեղծել սեփական մեթոդական զինանոցը և անընդհատ համալրել հաջողված, հետաքրքիր և հրապուրիչ առաջադրանքներով, հնարներով, օգտագործել ուշագրավ նյութեր յուրաքանչյուր դասի ընթացքում:

Գրականության ցանկ

1. Բարբարա Մարիկոնդա՝ << Գրավոր աշխատանքի այդ հրաշալի դասերը>>
2. Շերիլ Մ. Սիգմոն, Սիլվիա Մ. Ֆորդ՝ << Գրավոր աշխատանքի մինի դասեր >>
3. Դասավանդման ձեռնարկ՝ <<Ընթերցողական կարողությունների ձևավորումը տարրական դասարաններում՝ հիմնված հավաստի գնահատման վրա>>
4. Ջուլիետա Գյուլամիրյան՝ <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկան >>
5. Ա. Տեր-Գրիգորյան՝ <<Գրավոր աշխատանքները տարրական դասարաններում>>
6. Հորվարդ Գարդներ <<Ստեղծագործական մտքեր: Ստեղծագործության անատոմիա>>
7. Ջանի Ռոդարի՝ <<Ստեղծագործական երևակայության քերականություն>>
8. Ջանի Ռոդարի՝ Ինպես գրել հեքիաթ https://thestrip.ru/hy/smoky-eyes/struktura-skazki-kak-nauchitsya-sozdavat-volshebnye-istorii-dobrye/
9. Շալվա Ամոնաշվիլի՝ Գնահատականներ
10. Ռիչարդ Ֆեյնման՝ Գիտնականի ստեղծումը
11. Ջոն Հոլթ: Մանկական հաջողությունների երաշխիքը
12. <<Գրավոր գործնական պարապմունք՝ ինքնարտահայտումից մինչև գրավոր փաստարկ>>, ուղեցույց 7, <<Քննադատական մտածողության զարգացումը կարդալու և գրելու միջոցով>> ծրագիր

Հավելված

Ինչպե՞ս են անհետանում դասի բոպեները

1. Դասի նախապատրաստական փուլում դասի սկզբի կազմակերպում՝ աշակերտները դասարան են մտնում զանգը հնչելուն օես կան դրանից հետո: Բոպեներ խնայելու համար երեխաները պետք է մտնեն դասարան առնվազն 5 բոպե շուտ, որպեսզի կարողանան պատրաստվել դասին:

2. Հաճախելիության ստուգում՝ ներկա-բացակա: Դասի առաջին բոպեները չպետք է վատնել ստուգելու համար աշակերտների ներկայությունը, դա ակառղ է անել օրվա հերթապահը, դասարանի ավագը, կամ գրանցումները կատարել աշակերտների ինքնուրույն աշխատանքի ընթացքում: Կարևոր է բացակա աշակերտին տրամադել դասի բովանդակությունը ոևրէ եղանակով:

3.Չի կարելի դասի ընթացքում լուծել կազմակերպչական հարցեր՝ դասասենյակի մաքրություն, անհարաժեշտ պարագաների առկայություն, դա պետք էանել դասամիջոցին:

4.Ուշացող աշակերտի ուշացման պատճառի բացահայտում դասի ընթացքում: Զրույցները թողնել դասից հետո, դասղեկական ժամերին: հիշել, որ բոլորի ներկայությամբ արդարացում պահանջելը ստորացուցիչ է աշակերտի համար:

5. Կոնֆլիկտային իրավիճակների քննարկում դասի ընթացքում,կամ անհարաժեշտ պարագաների առկայության բացակայության վերաբերյալ պարզաբանումների պահանջում. խնդիրը պետք է արագ կարգավորել, իսկ պատճառների վերացման վերաբերյալ աշխատանքները պահել դասերից հետո:

6. դասամատյանով հարցումներ կատարելը՝ ցուցադրական: հարցումը պետք է պլանավորել նախօրոք:

7. դասի թեմայի շրջանակներից դուրս հարցումների կազմակերպում:

8.Անպատրաստ աշակերտին դիտավորյալ դաս հարցնելը կամ հրապարակային ելույթ ունենալ պարտադրելը հաղորդակցական կարողություններ չունեցող աշակերտին:

9. Անիմաստ հրահանգներ՝ կանգնիր, հարցին պատասխանիր, հետո նստիր, երկար պատասխանել հարցերին, ողջ դասի ընթացքում մեկ-երկու աշակերտի պատմել հարցնել:

10.Դասի շրջանակներից դուրս տեղեկատվության վերլուծություն կամ հետազոտություն, դա թողնում են դասից հետո ինքնուրույն աշխատանքի համար:

11.Ուսուցչի կամ աշակերտի ցանկացած գործողություն, որ առաջադրանք չի դառնում և չի ստուգվում:

12. Հստակ հրահանգների բացակայություն:

13. Պլանավորման բացակայություն:

14. դասագրքի տեղեկատվության արտագրություն տետրում:

15.Դժվար, բարդ աղյուսակների կառուցում դասի ընթացքում: գրաֆիկական կազմակերպիչները պետք է պատրաստել նախօրոք: